

Շատ քիչ կիրք կը դնէր իր վիճաբանութեանց մէջ անգամ, ու ծայրայեղութեանց քիչ կ'երթար: Բիշ անգամ անողոք կը մնար, ինչպէս Հմայեակ Արամեանցի պարազային: Դաւաճանը խարազանելու համար շատ մեղան սպառեց Օտեան, աշնպէս որ զինքն ալ հարցաքննիչ դատաւորին տարին երբ անծանօթ մը սատկեցուց հրէջը:

Ողջմտութիւն կար նաեւ իր մէջ: Զաւեշտադրութիւնը փողոց չէր տաներ, ոչ ալ հանրատուները կը պտտցնէր: Առողջութիւն կար իր զբաղան դատաստաններուն մէջ: Հեռուորութիւն չունէր, եւ կը խօսէր հակիրճ:

Մոլիէնի յոբելեանին առթիւ Հայ Արուեստի Տան սարքած ներկայացման օրը հակիրճ բայց խոր վերլուծում մը ըրաւ.

«Մոլիէնը անմահ է, որովհետեւ իր թիփերը կ'ապրին. անոնք կան ձեր, ներկաներու մէջ ալ»:

Կերպով մը իրեն ալ կ'ուղղուէր այս վերլուծումը: Իր թիփերն ալ կեանքէն քաղուած են ու մարդկային են: Փանջունիներ միշտ պիտի ըլլան: Բայց զօրաւոր էր իր մէջ մանաւանդ համեստութեան դիժը: Անհատապէս համեստ՝ համեստ էր նաեւ իրր զրոյ: Հեռու էր իրմէ դուրս-զօրծոցներ կերտած, հերոսներ ստեղծած ըլլալու յաւակնութիւնը: Համեստ էր իր նիստուկացին մէջ ալ, ամենուն հետ ընկեր ու ամենուն հետ բարեկամ:

Օտեան կը խորչէր մանաւանդ դովեստներէ: Զէր սիրեր զբուստականներ կարգալ, ոչ ալ կ'ախորժէր որ իր ներկայութեան ներքողէին զինքը: Երբ իր Պուքէչէն մեկնելուն առթիւ, սեղանի մը շուրջ համախմբել ուղեցի Հայ մտաւորականները, ակնյայտնի դժկամակութիւն մը ցուցուց: Դժուարաւ սեղանի տարի զինքը: Դժկամակութեամբ ալ մտիկ ըրաւ շրջալուծած խօսքերը:

Օտեան կը խորչէր կեղծիքէն, սուտէն: Նոյնիսկ դժուար կուզար իրեն գաղտնապահութիւնը: Արդէն միշտ իր համոզումն է որ կը գրէր, թէ եւ յաճախ կը սխալէր իր դատումներուն մէջ:

Թօռլաքեանի դատին ատեն ինքն ալ վկայ ներկայացաւ անգլիական դատարանին առջեւ՝

պարզելու համար Իթթիհատի կազմակերպած եղեռնը:

Երբ հարց տրուեցաւ իրեն թէ հայ յեղափոխականները զբամի համար մարդ զարկած են, հաստատական եղաւ իր պատասխանը:

Իրողութիւնը անշուշտ որ գաղտնիք մը չէ: Բայց դատի մը համար տարուած վկայի՞ մը բերնէն...

Երբ յետոյ մեղադրեցին զինքը, որ լուռ չէր մնացեր, «Ի՛նչ ընեմ, ըսաւ, ձեռքս չէ սուտ խօսիլ կամ գիտցածս չըսեր»:

Օտեան ո՞ր չէր պահեր բնաւ: Ոչ ալ քէն: Դիւրին էր զինք հաշտութեան մը մղելը վէճէ մը յետոյ:

Օր եղաւ, որ Վահան Թէքէեանի հետ շունկատու դարձաւ: «Վերջին Լուր»էն եւ «Ժողովուրդի Ձայն»էն ամէն օր սուր սուր կը խոցէին զիրար. նոյնիսկ կիրք, եւ ի վերջոյ քէն խառնրեցաւ վէճին: Ու կտրեցին բարեւը:

Հայ Արուեստի Տան անդամներ, խումբով, 1922-ի Բարեկենդանին զինարբուքի նստեր էինք Թօքաթլըն, երկու ոսոխներն ալ մեր հետը: Յանկարծ ներկաներէն մէկը հաշտութիւն պահանջեց երկու նախագահներուն միջեւ, — Վահան Թէքէեանն ալ ըլլալով Կեդր. Սորհուրդի նախագահ: Հաղիւ պահ մը տեւեց դժկամակութիւնը: Ոտքի ելան երկուստեք: Բայց ո՞վ պիտի երթար միւսին: Օտեան դտաւ միջին ճամբան:

«Քայլ մը ես, քայլ մը ան», — ըսաւ ան: Ու այսպէս մօտեցան իրարու երկու ոսոխները, ու համբուրուեցան:

Արտակարգ սէր մը ունէր Օտեան մանուկներուն հանդէպ: Մեծ հօր մը գուրգուրանքով կը մօտենար հանդիպած փոքրիկին, նոյնիսկ անծանօթներուն: Տեսակ մը հաճոյք էր իրեն համար պզտիկ մը կեցնել փողոցը, շոյել, ու շաքար տալ անոր: Իրեն աշնպէս կուզար, թէ փոքրիկներն են որ կը պահպանեն մեծերը:

Այս սկեպտիկ մարդուն նախապաշարունակներէն մէկն էր աս, զոր չէր ալ ծածկեր: Կարծես թէ երախտները նախախնամութիւնն ըլլալին մեծերուն:

Աղջնակ մը կար իր փողոցին անկիւնը, եւ Օտեան կիրակիէ կիրակի 20ԹՕԼԱ կ'առնէր կը բերէր անոր անվրէպ, առանց անունը գիտնա-